ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ Մուրադյան Ա. Մ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հանցավոր վարքագծի հոգեբանություն

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն.

«**Հանցավոր վարքագծի հոգեբանություն**» ուսումնական դասընթացը իրենից ներկայացնում է կրիմինալ- հանցագործ վարքի վերաբերյալ տեսական մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծություն, հոգեբանական, սոցիալական և ֆիզիոլոգիական գործոնների ազդեցությամբ պայմանավորված հանցագործ վարքագծի առաջացման վերլուծություն, հանցագործ անձ հասկացության ուսումնասիրում և վերլուծություն, հանցագործի անձնային արժեհամակարգի և վարքային կողմնորոշման առանձնահատկությունների հոգեբանական կերպի վերլուծություն, հանցագործի անձի տիպաբանական առանձնահատկությունների վերլուծություն:

Առարկայաշարի շրջանակներում կվերլուծվեն նաև հանցագործ վարքի առանձին ասպեկտների դրսևորման առանձնահատկությունները, հանցագործի բռնարար տիպի վերլուծության հոգեբանական ասպեկտները, ռեցիդիվ վարքի առանձնահատկությունները, հանցագործության պլանավորման, իրականացման, մոտիվի հոգեբանական ասպեկտների վերլուծությունը, խմբային և ոչ խմբային հանցագործությունների կատարման հոգեբանական դրդապատճառները, մեղքի և մեղավորության ասպեկտների վերլուծությունը, ուղղիչ, պենիտենցիար վարքագծային - հոգեբանական առանձնահատկությունների դրսևորման հիմնախնդիրները, սեռական բնույթի հանցագործների հոգեբանական վիճակների և կերպի ուսումնասիրումը և վերլուծությունը:

2. Առարկայի նպատակը և խնդիրը

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել իրավաբանական հոգեբանություն գիտության բաղադրիչ հանդիսացող հանցագործ վարքի հոգեբանության առանձնահատկություններին, հոգեբանական խնդրահարույց վարքագծի դրսևորման կերպին՝ որպես հանցագործ վարքի առաջացման նախապայման:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է**.

Իմանան՝

- հանցագործ վարքի առաջացման և դրսևորման հոգեբանական ասպեկտներին վերաբերվող գիտական ուսումնասիրությունները,
- հանցագործ վարքի առաջացման դրդապատճառների հոգեբանական, սոցիալական և ֆիզիոլոգիական ասպեկտները:

Կարողանան՝

- կիրառել իրավաբանական հոգեբանության բաղադրիչ՝ հանցագործ վարքի հոգեբանության վերլուծության և ուսումնասիրման հոգեբանական մեթոդները:

Ունակ լինեն՝

- իրականացնել հանցագործություններ կատարող անձի կերպի և դրդիչ հանգամանքների վերլուծություն:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	**Ամբողջը, ակ. ժամ.**	**Բաշխում ըստ կիսամյակների**					
		1 Կիս.	**2 Կիս.**	**3 Կիս.**	**4 կիս.**	**5 Կիս.**	**6 Կիս.**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**108**	**108**					
1.1. Լսարանային պարապմունքներ:	**18**	**18**					
1.1.1.Դասախոսություններ	**10**	**10**					
1.1.2.Սեմինարներ	**8**	**8**					
1.2. Ինքնուրույն աշխատանք	**90**	**90**					
Եզրափակիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**	**ստուգարք**					

2.3.Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմ-ունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. Հանցագործ վարքիասկացության հասկացություն	18	2		8
Թեմա 2. Հանցագործ վարքի առաջացման պայմանները				8
Թեմա 3. Հանցագործ անձ հասկացության տիպաբանական հասկացությունը	20	2	2	8
Թեմա 4. Հանցագործի վարքային առանձին տեսակներ և կատեգորիաներ				8
Թեմա 5. Հանցագործի անձնային տվյալների ոչսոչմնասիրում հանցագործ խմբի ներսում	22	2	2	8
Թեմա 6. Կազմակերպված հանցագործությունների կատարման պատճառները				10
Թեմա 7. Մեղքի և մեղավորության հասկացությունների հոգեբանական վերլուծություն	24	2	2	10
Թեմա 8. Անձի ուղղման նպաստող հիմնական գործոնները				10
Թեմա 9. Սեռական բնույթի հանցագործների հոգեբանական վիճակների հետազոտում	24	2	2	10
Թեմա 10. Հանցագործ վարքի ուսումնասիրման արդի հոգեբանական մեթոդների ուսումնասիրում և կիրառում				10
Ընդամենը	108	10	8	90

3.Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Հանցագործ վարքիասկացության հասկացություն:

Հանցագործ վարք հասկացության վերլուծությունը, առաջացման և ձևավորման հոգեբանական դրդապատճառները: Հանցագործի անձի ձևավորման հոգեբանական նախադրյալները, առաջացման վրա ազդող գործոնները:

Թեմա 2. Հանցագործ վարքի առաջացման պայմանները:

Հանցագործ վարքի առաջացման և ձևավորման սոցիալական և ֆիզիոլոգիական դրդապատճառները: Հանցագործ անձի ձևավորման վրա ազդող սոցիալական և ֆիզիոլոգիական գործոնների ուսումնասիրումը:

Թեմա 3. Հանցագործ անձ հասկացության տիպաբանական հասկացությունը:

Հանցագործ անձ հասկացության տիպաբանական առանձնահատկությունները: Հանցագործի անձնային տիպաբանական կերպի հոգեբանական մեխանիզմների վերլուծությունը:

Թեմա 4. Հանցագործի վարքային առանձին տեսակներ և կատեգորիաներ:

Հանցագործի վարքային առանձին տեսակների և կատեգորիաների վերլուծություն, պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում: Հանցագործի բռնարար տիպի, հանցագործի իմպուլսիվ տիպի, հանցագործի ռեցիդիվ տեսակի, հանցագործի կանխամտածված հանցագործության կատարման և անզգուշաբար կատարման դրդապատճառների վերլուծություն:

Թեմա 5. Հանցագործի անձնային տվյալների ոչսոչմնասիրում հանցագործ խմբի ներսում:

Հանցագործի անձնային առանձնահատկությունների հոգեբանական վերլուծությունը հանցագործ խմբի ներսում, մոտիվների և նպատակների ուսումնասիրում:

Թեմա 6. Կազմակերպված հանցագործությունների կատարման պատճառները:

Կազմակերպված հանցագործությունների կատարման հոգեբանական ասպեկտները: Կազմակերպված հանցագործություններ կատարող անձի անձնային առանձնահատկությունների վերլուծություն:

Թեմա 7. Մեղքի և մեղավորության հասկացությունների հոգեբանական վերլուծություն:

Մեղքի և մեղավորության հոգեբանական առանձնահատկությունների հիմնական դրսևորման ձևերը: Մեղքի հոգեբանական ընդունման կամ չընդունման դրդապատճառների վերլուծություն, մեղավորության դրույթի հետազոտում:

Թեմա 8. Անձի ուղղման նպաստող հիմնական գործոնները:

ՈՒղղիչ, պենիտենցիար վարքագծային–հոգեբանական առանձնահատկությունների դրսևորման հիմնախնդիրները: ՈՒղղիչ–պենիտենցիար վարքային մոդելների ներդրման հոգեբանական ընկալման հիմնախնդիրների ուսումնասիրումը մերօրյա հասարակարգում որպես կանխարգելիչ և ադապտիվ գործոն:

Թեմա 9. Սեռական բնույթի հանցագործների հոգեբանական վիճակների հետազոտում:

Սեռական բնույթի հանցագործների հոգեբանական վիճակների և կերպի ուսումնասիրումը: Սեռական բնույթի հանցագործություններ կատարող անձի կերպի և դրդիչ հանգամանքների հոգեբանական վերլուծություն:

Թեմա 10. Հանցագործ վարքի ուսումնասիրման արդի հոգեբանական մեթոդների ուսումնասիրում և կիրառում:

Հանցագործ վարքի ուսումնասիրման հոգեբանական մեթոդների ուսումնասիրում և վերլուծություն: Տարբեր մեթոդների իրականացման և ներգրավման համահավաք ներկայացում:

4. **Գրականության ցանկ**

Պարտադիր գրականություն

1. Արա Գաբուզյան Հանցավոր վարքագծի մոտիվացիա | Հեղինակային հրատ., Երևան, 2017, 96 էջ
2. Մարինե Միքայելյան Բռնության և զոհի հոգեբանություն | Ուս. ձեռնարկ: Ճարտարագետ: 2016թ., 164 էջ
3. Աննա Մարգարյան Ընկերական միջավայրի ազդեցությունը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում | ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2(2) 2018, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2019, էջ 320-334
4. Սերգեյ Առաքելյան (Բռնի հանցավոր վարքագծի աղբյուրներն ու դետերմինացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում)
5. Васильев В.Л. - Юридическая психология - М. 1991г.
6. Еникеев М.И. - Юридическая психология - М. 2000г.
7. Еникеев М.И. - Энциклопедия по юридической психологии - М. 1999г.
8. Немов Н.С. - Общая психология - Т. 1 - М. 2000г.
9. Чуфаровский Ю.В. - Юридическая психология - М. 2000г.
10. Чуфаровский Ю.В. - Психология оперативно-розыскной и следственной деятельности - М. 2000г.
11. Аминов И.И. - Психология для юристов - Омега 2005г.
12. Романов Н.И. - Юридическая психология - М. 2004г.
13. Шиханцов Р.В. - Юридическая психология - М. 1996г.

Լրացուցիչ գրականություն

1. Аминов И. И., Давыдов Н. А., Кокурин А. В. Юридическая психология. Учебник для бакалавров. — М.: Проспект. 2015. 304 с.
2. Абульханова-Славская К.А. Деятельность и психология личности. - М.,1980.
3. Абульханова-Славская К.А. Стратегия жизни. - М.,1991.

4. Антонян Ю.М. Роль конкретной жизненной ситуации в совершении преступления, - М. 1973.
5. Васильев В.Л. Судебная психология: Психологический практикум для следователей. - М.,1974.
6. Васильев В. Л. Юридическая психология (для бакалавров). Учебник. — М.: Юстиция. 2018. 608 с.
7. Еникеев М. И. Юридическая психология. — М.: Норма. 2013. 502 с.
8. Клейберг Ю. А., Орлова Е. А., Орлова Ю. Л. Ювенальная юридическая психология. Учебник для магистров. — М.: Юстиция. 2017. 264 с.
9. Мацкевич И. М., Эминов В. Е., Дашков Г. В. Актуальные проблемы криминологии, юридической психологии и уголовно-исполнительного права. — М.: Проспект. 2016. 224 с.
10. Романов В. В. Юридическая психология. Учебное пособие для СПО. — М.: Юрайт. 2019. 170 с.
11. Романов В. В. Юридическая психология. Хрестоматия. Учебное пособие. — М.: Юрайт. 2015. 472 с.
12. Романов В. В., Котлярова Л. Н. Юридическая психология. Презентации в ЭБС. Учебник для академического бакалавриата. — М.: Юрайт. 2018. 478 с.
13. Чуфаровский Ю. В. Юридическая психология в вопросах и ответах. Учебное пособие. — М.: Проспект. 2020. 256 с.
14. Чуфаровский Ю.В. Юридическая психология. Учебник. — М.: Проспект. 2019. 472 с.
15. Шевченко А. М., Самыгин С. И. Юридическая психология. Учебное пособие. — М.: Инфра-М. 2017. 272 с.
16. Шмыков В.И. Психология в юридической практике — когнитивные аспекты допроса (опроса) / под ред. О.А. Кузнецовой, В.Г. Голубцова, Г.Я. Борисевич, Л.В. Боровых, Ю.В. Васильевой, С.Г. Михайлова, С.Б. Полякова, А.С. Телегина, Т.В.

Шершень // Пермский юридический альманах. Ежегодный научный журнал. 2018. N 1. С. 495 — 501.

17. Шпаргалка по юридической психологии. — М.: Окей-книга. 2016. 32 с.
18. Юридическая психология. Краткий курс. Учебное пособие. — М.: Окей-книга. 2015.
19. Васильев В.Л. Судебная психология: Психологический практикум для следователей. - М.,1974.
20. Гернет М.Н. Очерки тюремной психологии // Право и жизнь. 1992-1993.
21. Глазырин Ф.В. Психология следственных действий. - Волгоград. 1983.
22. Гримак Л.И. Резервы человеческой психики. - М.,1989.
23. Губин А.В., Чуфаровский Ю.В. Общение в нашей жизни. - М.,1992.
24. Гуров А.И. Профессиональная преступность. Прошлое и современность. -М.,1990.
25. Ю.Дубинин Н.П. Карпец И.И., Кудрявцев В.Н. Генетика, поведение, ответственность. - М., 1990.

Դասագրքեր ընթերցման համար

1. Юридическая психология. Краткий курс. Учебное пособие. — М.: Окей-книга. 2015. 11
2. Васильев В.Л. Судебная психология: Психологический практикум для следователей.
3. Васильев В. Л. Юридическая психология (для бакалавров). Учебник. — М.: Юстиция. 2018.

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական

փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6. Պրակտիկ բլոկ

Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը – բանավոր հարցում:

Թեմա 1. Հանցագործ վարք հասկացության վերլուծությունը, առաջացման և ձևավորման հոգեբանական դրդապատճառները: Հանցագործի անձի ձևավորման հոգեբանական նախադրյալները, առաջացման վրա ազդող գործոնները:

Թեմայի շրջանակներում կվերլուծվեն նաև դեպի հանցագործության մղող սոցիալ-հոգեբանանական դրդապատճառները, հնարավոր կանխման մեխանիզմները:

Թեմա 2. Հանցագործ վարքի առաջացման և ձևավորման սոցիալական և ֆիզիոլոգիական դրդապատճառները: Հանցագործ անձի ձևավորման վրա ազդող սոցիալական և ֆիզիոլոգիական գործոնների ուսումնասիրումը: Թեմայի շրջանակներում վերոնշյալ գործոնների ուսումնասիրումը և վերլուծությունը կամփոփվի նաև տեսագործնական–հոգեբանական մեխանիզմների ակտիվ ներգրավմամբ՝ առավելագույն արդյունք ապահովելու համար:

Թեմա 3. Հանցագործ անձ հասկացության տիպաբանական առանձնահատկությունները: Հանցագործի անձնային տիպաբանական կերպի

հոգեբանական մեխանիզմների վերլուծությունը: Կուսումնասիրվի ինչպես հանցագործի անձնային տիպաբանական առանձնահատկությունների վերլուծությունը, այլև անձ, անհատ, անհատականություն ճանապարհին առաջացող և անձի անձնային աճը խաթարող գործոնների ազդեցության շրջանակները, խառնվածքի տիպերը և բնավորության գծերի տեսակային առանձնահատկությունները:

Թեմա 4. Հանցագործի վարքային առանձին տեսակների և կատեգորիաների վերլուծություն, պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում: Հանցագործի բռնարար տիպի, հանցագործի իմպուլսիվ տիպի, հանցագործի ռեցիդիվ տեսակի, հանցագործի կանխամտածված հանցագործության կատարման և անզգուշաբար կատարման դրդապատճառների վերլուծություն, առանձին դեպքերի քննարկում, նորմայի և պաթոլոգիայի սահմանների ներկայացում:

Թեմա 5. Հանցագործի անձնային առանձնահատկությունների հոգեբանական վերլուծությունը հանցագործ խմբի ներսում, մոտիվների և նպատակների ուսումնասիրում, խմբի սահմանների և ենթակայության սահմանների ներկայացում:

Թեմա 6. Կազմակերպված հանցագործությունների կատարման հոգեբանական ասպեկտները: Կազմակերպված հանցագործություններ կատարող անձի անձնային առանձնահատկությունների վերլուծություն; խմբային ասպեկտների բացահայտում:

Թեմա 7. Մեղքի և մեղավորության հոգեբանական առանձնահատկությունների հիմնական դրսևորման ձևերը: Մեղքի հոգեբանական ընդունման կամ չընդունման դրդապատճառների վերլուծություն, մեղավորության դրույթի հետազոտում: Կքննարկվի անձնային առանձնահատկությունների և խառնվածքի ներազդեցությունը մեղքը և մեղավորությունը որպես հասկացությունների ընկալման առումով:

Թեմա 8. ՈՒղղիչ, պենիտենցիար վարքագծային–հոգեբանական առանձնահատկությունների դրսևորման հիմնախնդիրները: ՈՒղղիչ–պենիտենցիար վարքային մոդելների ներդնման հոգեբանական ընկալման հիմնախնդիրների ուսումնասիրումը մերօրյա հասարակարգում որպես կանխարգելիչ և ադապտիվ գործոն, ուղղիչ աշխատանքների անցկացման մեթոդաբանության ներկայացում:

Թեմա 9. Սեռական բնույթի հանցագործների հոգեբանական վիճակների և կերպի ուսումնասիրումը:Սեռական բնույթի հանցագործություններ կատարող անձի կերպի և դրդիչ հանգամանքների հոգեբանական վերլուծություն, բռնարարքի հոգեբանական պատճառների վերլուծում:

Թեմա 10. Հանցագործ վարքի ուսումնասիրման հոգեբանական մեթոդների ուսումնասիրում և վերլուծություն, մեթոդների տեսակների քննարկում, անցկացման առանձնահատկությունների վերլուծություն:

Մագիստրոսական թեզի թեմաների հնարավոր ցանկ

1.Հանցագործ վարքի ձևավորման հոգեբանական և սոցիալական գործոնները

2.Սեռական հանցագործությունների կատարման դրդապատճառները որպես մանկական տրավմաների վերապրման պայման:

7. Մեթոդական բլոկ

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը.

Ուսուցման մեթոդները դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդների օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսանողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- նպաստեն ուսանողների և դասախոսների արդյունավետ հաղորդակցմանը,
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին,
- դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: